ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2021 թվականի N 289-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 289-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ----------էջ 3
2. Ամփոփագիր ----------էջ 5
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ ---------- էջ 6
4. Ֆինանսական ցուցանիշներ ---------- էջ 7
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ----------էջ 39
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 39
7. Եզրակացություն----------էջ 40
8. Առաջարկություն ----------էջ 40

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 221-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	1. ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում: 2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք: 3. ՀՀ կառավարության 27.05.2021 թվականի ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» N 881-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) 2021 թվականի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 27,329,118.80 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 29,576,321.35 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի վեց ամիսների) պլանը կազմել է 13,780,561.50 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 15,139,440.30 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 11,651,738.63 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 10,825,249.97 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,044,017.21 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով ծախս է նախատեսվել 50 միջոցառման համար, որից 9 միջոցառում (1,115,291.80 հազ. դրամ ընդհանուր գումարով) չի իրականացվել, արդյունքում՝ ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 71.5%-ով:

Աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննությունն իրականացվել է ութ միջոցառման շրջանակներում՝ ընդամենը 6,635,696.75 հազ. դրամ դրամարկղային ծախսով:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննության ընթացքում արձանագրվել են հետևյալ փաստերը՝

1. 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակներում չի պահպանվել Աշխատակազմի և «STEPTOE & JOHNSON» ընկերության միջև կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջը՝ վճարումը չի կատարվել ըստ վճարման ժամանակացույցի:

2. 1223-11001 միջոցառման շրջանակներում «ԼԱԼԻՎ» ընկերության հետ կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման 10.03.2021 թվականի թիվ 30 և 17.03.2021 թվականի թիվ 31 արձանագրություններում հիմք է ընդունվել 08.04.2021 թվականին կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունը:

3. 2021 թվականի վեց ամիսների ընթացքում Աշխատակազմի հաստիքների թիվը կրճատվել է 4-ով՝ կազմելով 692: Միաժամանակ, դիտարկվող ժամանակահատվածում 156-ից 165 հաստիք չի համալրվել:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հաշվեքննության արդյունքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել է անհամապատասխանություն, որը համատարած չէ:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
-.10.2021թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աշխատակազմի 2021 թվականի վեց ամիսների ճշտված պլանը կազմել է 15,139,440.30 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 11,651,738.63 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 10,825,249.97 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,044,017.21 հազ. դրամ:

Ստորև ներկայացվում է հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը.

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումներ

հազ. դրամ

N	Միջոցառում, հոդված				Փաստ
1	1018-32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,055,710.08
2	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,026,258.59
3	1136-11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	1,304,484.39
4	1136-11014	Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով	4822	Այլ հարկեր	555,966.33
5	1136-11015	Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը	4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	390,159.00
6	1136-31004	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,204,323.67

7	1213-11001	Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	322,893.20
8	1223-11001	Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	Այլ ծախսեր	775,901.49
Ընդամենը					6,635,696.75

Ծրագիր՝ 1018 «Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

Միջոցառում՝ 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

Հոդված՝ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ»

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝

1. Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր:
2. Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ:
3. Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ:
4. Ծրագրի կառավարում:

Ծրագիրն ընգրկում է երկու միջոցառում՝ 11001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» և 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»:

1018 «Պետական հատվածի արդիականացում» ծրագրի 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման առաջին կիսամյակի ճշտված պլանով 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով

նախատեսվել է 1,396,807.20 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 172,000.0 հազ դրամ (ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում), փաստը և փաստացի ծախսը՝ 1,055,710.08 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարդային ծախսը կազմել է 75,58%:

31.12.2020 թվականի դրությամբ 1018 ծրագրի արտարժութային հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,500,000.0 ԱՄՆ դոլար:

Առաջին կիսամյակում մատակարարվել են էլեկտրոնային համակարգեր և համակարգչային սարքավորումներ, որոնք իրականացվել են թվով 10 պայմանագրի շրջանակներում՝ որոնցից 3-ը ստորագրվել է 2021 թվականին:

Ստորև ներկայացվում է սույն պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 2

1018-32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման (հոդված՝ 5129) 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված վճարումների վերաբերյալ

Հ/Հ	Ընթացակարգի ծածկագիր	Գնման առարկայի նկարագրությունը	Գնման ձևը	Մասնակիցները	Հաղթող կազմակերպությունը	Պայմանագրի արժեքը ԱԱՀ-ն ներառյալ		Պայմանագրի կնքման օրը		Փաստացի վճարումները կատարված 2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում /հազ. դրամ/		Մեկնաբանություններ
						Սկիզբ	Փոփոխություններ	Սկիզբ	Ավարտ	Վարկային միջոցներ	Համաֆինանսավորում	
1	PSMP 3-GO-2-2-9/A-3	ՀՀ ոստիկանության համար Երևանում, Գյումրիում ու Վանաձորում օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի ներդրման և պահանջվող սարքավորումների ձեռքբերում			Համատեղ ձեռնարկություն SOS Systems LLC, X-Art LLC, Smart Production LLC and GEOMAPIS LLC	376,911.6 հազ. դրամ	673,458.0 հազ. դրամ	16/08/19	23/11/21	149,506.0	29,901.2	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է 3 (b), 4-րդ և 5-րդ փուլերը:
2	PSMP 3-GO-2-2-6/1	Էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգի մատակարարում և տեղադրում			Համատեղ ձեռնարկություն VXSoft Limited և Unicomp CJSC	284,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ	568,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ	15/01/19	1/05/21	66,802.04	1,156.1	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է Պայմանագրի 5-րդ փուլի (բ/2) մասը և կատարվել է համակարգի գործառնական ընդունումը:

3	PSMP 3-GO-2-2-17	Փաստաթղթերի վավերականացման և անձնական էլ. գրասենյակի համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա); 2. ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	430,000 Եվրո		24/11/20	1/02/22	48,566.79	-	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը:
4	PSMP 3-GO-2-2-10	Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական E-Notification համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա) 2. ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix Consulting LLC (Հայաստան)	ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix Consulting LLC (Հայաստան)	267,268.0 հազ. դրամ		25/11/20	2/02/22	24,237.2	4,847.44	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը:
5	PSMP 3-GO-2-2-22/2	Իրավապահ և այլ պետական մարմինների համար SS սարքավորումների ձեռքբերում (Լոտ 2)	Ազգային մրցակցային մրցույթ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	25,673.7 հազ. դրամ		25/12/20	25/03/21	21,386.95	4,277.39	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:
6	PSMP 3-GO-2-2-22/3	Իրավապահ և այլ պետական մարմինների համար աուդիո-վիդեո սարքավորումների ձեռքբերում	Գնումներ	«Գրիման» ՍՊԸ; «Էլկոմպ» ՍՊԸ	«Գրիման» ՍՊԸ	1,055.7 հազ. դրամ		29/12/20	28/01/21	879.75	175.95	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:

7	PSMP 3-GO-2-2-4	Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. JV of IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC 2. Synergy International Systems, Inc.	1. JV of IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC	850,186.8 հազ. դրամ և 170,037.4 հազ. դրամ ԱԱՀ		14/12/20	14/03/22	440,159.48	88,031.90	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը և մատակարարվել են սարքավորումները:
8	PSMP 3-GO-2-2-22/1	Իրավապահ և այլ պետական մարմինների համար գրասենյակային կահույքի ձեռքբերում	Ազգային մրցակցային մրցույթ	«Արգավանդ Կահույք» ՍՊԸ «Գործ-555» ՓԲԸ Նեկա ՍՊԸ Ֆոտոն ՍՊԸ	«Ֆոտոն» ՍՊԸ	50,318.2 հազ. դրամ		11/01/21		27,692.17	5,538.43	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում մատակարարվել է պայմանագրով նախատեսված կահույքի մի մասը:
9	PSMP 3-GO-2.2.15	Green Systems LLC (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	Միջազգային մրցակցային մրցույթ	Green Systems LLC (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	Green Systems LLC (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	110,574.0 հազ. դրամ և 1,563,321 ԱՄՆ դոլար		17/03/21	15/09/21	91,101.25	1,842.9	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում մատակարարվել են պայմանագրով նախատեսված սարքավորումների մի մասը:
10	PSMP 3-GO-2.2.1.2	Unicomp CJSC	Միջազգային մրցակցային մրցույթ	Unicomp CJSC	Unicomp CJSC	433,464.0 հազ. դրամ		16/03/21	24/06/21	6,122.0	7,224.40	2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում մատակարարվել են պայմանագրով նախատեսված սարքավորումների մի մասը:

		Ընդամենը վճարումներ								906,453.64	142,995.71	

Համաձայն վերոնշյալ աղյուսակի՝ 2021 թվականի առաջին կիսամյակում ընդամենը կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 1,049,449.35 հազ. դրամ (այդ թվում՝ վարկային միջոցներից 906,453.64 հազ. դրամ և ՀՀ պետական համաֆինանսավորման միջոցներից 142,995.71 հազ. դրամ), սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի առաջին կիսամյակի բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 1,055,710.08 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում»

Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

2021 թվականի պետական բյուջեով 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 1,085,504.0 հազ դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 1,026,258.59 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,075,468.37 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 94,54%:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 3

1136-11001 միջոցառման 2021 թվականի առաջին կիսամյակում կատարված վճարումների (դրամարկղային ծախս) վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	-	92,297.1	101,072.5	200,215.9	100,343.9	95,132.9	589,062.3
Եկամտային հարկ	-	34,528.8	36,142.4	37,135.4	35,236.5	36,076.4	179,119.5
Սոցիալական վճար	-	5,744.2	5,773.1	5,718.4	5,834.8	5,742.7	28,813.1
Դրոշմանիշային վճար	-	2,205.0	2,373.5	2,255.0	2,152.0	2,212.5	11,198.0
Արձակուրդային վճար	8,397.0	12,162.0	16,103.3	19,422.6	18,069.0	33,561.6	107,715.4
Պարգևավճար	398.6	12,787.3	10,179.9	7,030.4	9,884.6	16,000.8	56,281.6
Վերջնահաշվարկ	5,434.6	6,532.6	1,100.7	4,649.1	2,485.1	10,229.9	30,432.0
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	564.5	3,898.4	1,898.4	5,107.7	4,603.2	4,202.7	20,274.9
Օգնություն	-	391.6	-	103.2	277.0	778.8	1,550.6
Թաղման նպաստ	114.4	446.4	493.4	973.6			2,027.9
Անդամավճար	-	155.9	187.0	170.3	197.8	194.1	905.2
ԴԱՀԿ	-	-	-				-
ԸՆԴԱՄԵՆԸ	14,909.1	171,149.3	175,324.2	282,781.6	179,083.9	204,132.4	1,027,380.5

Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 1,027,380.5 հազ. դրամից 1,121.9 հազ. դրամը հաշվետու ժամանակահատվածում ծախսի վերաձևակերպում է:

Համաձայն ՀՀ վարչապետի 26.05.2021 թվականի թիվ 569-Ա որոշման՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է 692: Աշխատակազմի կողմից տրամադրված ՀԾ-ից արտահանված առաջին կիսամյակի ընդլայնված հաշվետվության՝ աշխատակիցների քանակը հունվար-հունիս ամիսներին կազմել է համապատասխանաբար 540, 539, 534, 535, 536, 527 հաստիք:

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ուսումնասիրվել է ընտրված 14 աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»

Հոդված՝ 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին»

2021 թվականի պետական բյուջեով 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանով նախատեսվել է 2,040,138.0 հազ դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 460,000.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 1,304,484.39 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 63,94%:

Վերոնշյալ հոդվածով 2021 թվականի առաջին կիսամյակում երեք կազմակերպություններին կատարվել են վճարումներ, որը ներկայացվում է ներքոնշված աղյուսակում:

Աղյուսակ 4

1136-11011 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

հ/հ	Կազմակերպություն	Պայմանագրի համար	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ	TPQI-EIF-OP	197,344.14	91,222.19	288,566.33

2	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ	TPQI-ANIF-OP	495,082.39	309,297.01	804,379.40
3	Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ	TPQI-ISC-OP	187,446.62	17,707.41	205,154.03
	Ընդամենը վճարումներ		879,873.15	418,226.61	1,298,099.76

Այսպիսով, 2021 թվականի առաջին կիսամյակում վերը նշված միջոցառմանը հատկացվել է 1,298,099,76 հազ. դրամ, որից 879,873.15 հազ. դրամը ՀԲ վարկային միջոցներից և 418,226.61 հազ. դրամը համաֆինանսավորման միջոցներից:

Թիվ 8390-ԱՄ վարկային պայմանագրով նախատեսվող աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» (ՁԻՀ), «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ միջև կնքվել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրեր:

1. «**Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ**»

Աշխատակազմը մի կողմից և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ը մյուս կողմից, կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման աջակցության նպատակով՝ կողմերը 2020թ. մայիսի 4-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված պետական – մասնավոր գործընկերությունների (ՊՄԳ) և համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի փոխհատուցումն է:

Պայմանագրով սահմանված չափով և կարգով կազմակերպությանը տրամադրվում է դրամաշնորհ գործառնական ծախսերի կատարման համար: Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ծրագրի կառավարման գրասենյակին (ԾԿԳ) է ներկայացնում տարեկան նախահաշիվը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի 2021 թվականի համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով՝

Բաղադրիչ 1. – «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 2. – Ինժեներական քաղաք բաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 3. – Նորարարության զարգացման համաֆինանսավորող դրամաշնորհներ/ Մարզային զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների ենթաբաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 4. – Ազգային գերհամակարգչային կենտրոնի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 5. – Կիբեռ անվտանգության ինկուբատորի և հետազոտությունների և մշակումների (R&D) լաբորատորիայի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին վճարված գումարները ըստ բաղադրիչների ներկայացված են ներքոնշված աղյուսակում.

Աղյուսակ 5

2021 թվականի առաջին կիսամյակում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին ըստ բաղադրիչների կատարված վճարումների վերաբերյալ

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Վճարում, հազ. դրամ		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	26,566.94	9,992.39	36,559.33
Բաղադրիչ 2	55,335.73	30,950.36	86,286.09
Բաղադրիչ 3	21,555.25	8,255.62	29,810.87
Բաղադրիչ 4	4,694.97	1,612.23	6,307.20
Բաղադրիչ 5	37,225.20	22,571.07	59,796.27
ԸՆԴԱՄԵՆԸ	145,378.09	73,381.67	218,759.76

«Նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհներ և մարզային զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհներ» ենթաբաղադրիչի շրջանակներում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, Աշխատակազմի և շահառու կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում 2021 թվականի առաջին կիսամյակում կատարվել են վճարումներ, որոնք ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում.

Աղյուսակ 6

2021 թվականի առաջին կիսամյակում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Պայմանագիր		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
01/2020/IMG	«ԷԼՍԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ	4,582.80	2,905.19	7,487.99
02/2020/IMG	«ՆԱԻՐԻ ՍԹԵՄ» ՍՊԸ	3,404.96	635.44	4,040.40
03/2020/IMG	«ՍԹԵՄ ԴԻԴԱԿՏԻԿՍ» ՍՊԸ	4,673.42	868.58	5,542.00
04/2020/IMG	«ՕՕՐԵՍ» ՍՊԸ	4,767.25	2,732.75	7,500.00
05/2020/IMG	«ՌԵՎՈԼՔՈՆ» ՍՊԸ	4,650.06	832.44	5,482.50
06/2020/IMG	«ՎԵԼՎԻՈ» ՍՊԸ	1,402.70	517.30	1,920.00
07/2020/IMG	«ՈՒԱՅՐՍՏՈՔ» ՍՊԸ	5,229.0	2,244.96	7,473.96
08/2021/IMG	«ԷՅԱՅՓԻ ԹԵՔ» ՍՊԸ	2,534.84	909.16	3,444.00
10/2021/IMG	«ՖՈԼԴԻՆԿ» ՍՊԸ	1,250.00	250.00	1,500.00

11/2021/IMG	«ԳԵԲԲԻ» ՍՊԸ	3,116.85	1,203.15	4,320.00
12/2021/IMG	«ԳԵԲԵՍԵՐՏ» ՍՊԸ	5.085.41	1,114.59	6,200.00
14/2021/IMG	«ՍՄԱՐԹ ԼՈՔԵՐ» ՍՊԸ	6,051.45	1,435.47	7,486.92
15/2021/IMG	«ՄԵՏՐԻԿ» ՍՊԸ	5,217.28	2,191.51	7,408.79
ԸՆԴԱՄԵՆԸ		51,966.02	17,840.54	69,806.56

Կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն մարտ ամսին կատարել է 29,252.23 հազ. դրամի գործառնական ծախսեր և 13,686.67 հազ. դրամի հարկեր գործառնական ծախսերից:

Համաձայն դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրի 3.4 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին կազմակերպությունը աշխատակազմին կներկայացնի հարկային հաշիվ տվյալ ամսվա ընթացքում կատարած ծախսերի գումարի չափով:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին հաջորդող մինչև 3-րդ աշխատանքային օրը կազմակերպության կողմից ԾԿԳ-ին է ներկայացվում հաշվետվություն նախորդ ամսվա ծախսերի վերաբերյալ (ներառյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները): Համաձայն պայմանագրի 3.7 կետի, նշված փաստաթղթերը ստանալուց հետո, ԾԿԳ-ն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրանց համապատասխանությունը պայմանագրի, համապատասխան գործառնական ձեռնարկի և տարեկան նախահաշվի պայմաններին: Անհամապատասխանությունների դեպքում կազմակերպությունը գրավոր կարգով տեղեկացնում է և հնարավորություն է ընձեռվում նրան տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր և բացատրություններ, կատարել ուղղումներ: Ստուգումը ավարտելուց հետո ԾԿԳ-ն հաստատում է հաշվետվությունը:

Համաձայն պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով:

16.04.2021 թվականի համապատասխան հանձնարարականով նշված գումարները վճարվել են կազմակերպությանը, չնայած հաշվի վրա առկա էր պահանջվածից ավելի չօգտագործված գումար: Փաստորեն նվազեցում չի կատարվել:

Առաջին կիսամյակի հաջորդ ամիսներին նույնպես չօգտագործված գումարի մասով ամսվա վճարումներից նվազեցումներ չեն կատարվել և ամբողջությամբ բավարարվել են ծախսի փոխհատուցման կազմակերպության գրությունով պահանջվող գումարը:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը հաստատելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում, որը 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում չի կիրառվել:

Առաջին եռամսյակում արձանագրված այս խախտումները վերացնելու նպատակով սույն թվականի հուլիսի 28-ի համաձայնագրով դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 04.05.2020 թվականի պայմանագրում կատարվել են փոփոխություններ:

2.«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ

Աշխատակազմը մի կողմից և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը մյուս կողմից կնքեցին 15.05.2020թ. դրամաշնորհի հատկացման վերաբերյալ TPQI – ANIF – OP պայմանագիրը:

Պայմանագրի առարկան ներդրողներին և արտահանողներին ուղղված առանցքային ծառայությունների իրականացումն է, ինչպիսիք են՝

1) Մարքետինգի և խթանման աշխատանքներ իրականացնելու նպատակով արտահանման և ներդրումների առանցքային օտարերկրյա շուկաներում հայկական ներկայացուցչությունների ստեղծման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը,
2) Արտահանման մի շարք ծրագրերի և շուկայի հետազոտության ծառայությունների, այդ թվում «Արտահանողի ուղեցույցի», «Արտահանմանը պատրաստվածության գնահատումների» և «Արտահանման ուսուցման ծրագրերի» մշակման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը,
3) Իմիջի ձևավորման և ներդրումային իրազեկման ծառայությունների իրականացում,
4) ՆԱԽԱԶԳ-ի համար տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ստեղծում ներառյալ SS սարքավորումների գնումը և հաճախորդների հետ կապը կառավարման (ՀԿԿ/CRM) համակարգի մշակումը՝ գործառնությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
5) Ուսուցման և կարողությունների զարգացման աշխատանքների իրականացումը,
6) Միջազգային փորձագետների վարձումը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ԾԿԳ-ին է ներկայացնում համապատասխան տարեկան ծախսերի նախահաշիվը:

2021 թվականին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով.

ԲԱՂԱԴՐԻՉ 1	գործառնական ծախսեր
ԲԱՂԱԴՐԻՉ 2	ներկայացուցչություններ (Մոսկվա, Փարիզ, Աբու Դաբի)
ԲԱՂԱԴՐԻՉ 3	սարքավորումների գնում, հաղորդակցման և PR կապերի իրականացում

Վերոնշյալ բաղադրիչներով նախահաշվով նախատեսված ծախսերը ներկայացվում են ներքոնշված աղյուսակում:

Աղյուսակ 7.

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի նախահաշվով նախատեսված ծախսերը ըստ բաղադրիչների

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Ծախս, հազ.դրամ		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	283,555.00	155,931.68	439,486.68
Բաղադրիչ 2	225,915.00	153,365.32	379,280.32
Բաղադրիչ 3	109,250.00	21,850.00	131,100.00
ԸՆԴԱՄԵՆԸ	618,720.00	331,147.00	949,867.00

11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» միջոցառման 452100 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021թ. երկրորդ եռամսյակի ընթացքում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի ծախսերի դիմաց կատարված վճարումները կազմել են.

Աղյուսակ 8

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հաշվետու ժամանակահատվածի վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Բաղադրիչներ	Մարտ			Ապրիլ			Մայիս		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ՀԲ վարկային միջոցներից	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	37,421.03	18,885.37	56,306.40	35,557.30	19,616.86	55,174.16	30,224.84	20,957.12	51,181.96
2	60,056.47	28,727.58	88,784.05	30,135.50	33,941.39	64,076.89	2,533.56	4,934.66	7,468.22
3	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդ.	97,477.50	47,612.95	145,090.45	65,692.80	53,558.25	119,251.05	32,758.40	25,891.78	58,650.18

Համաֆինանսավորման միջոցներից 1,661.85 հազ. դրամը հետ է վերադարձվել: Արդյունքում վճարումները կազմել են՝

ՀԲ վարկային միջոցներից – 195,928.70 հազ.դրամ

ՀՀ համաֆինանսավորման միջոցներից – 125,401.13 հազ.դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ – 321,329.83 հազ.դրամ

Ապրիլ ամսին, ինչպես նաև հաջորդ ամիսներին, չնայած հաշվին առկա է եղել պահանջվածից ավելի գումար՝ վճարման համապատասխան հանձնարարականներով, իրականացվել է պահանջված գումարների ամբողջությամբ վճարում:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին հաջորդող մինչև երրորդ աշխատանքային օրը կազմակերպության կողմից ԾԿԳ-ին է ներկայացվում դրամական հոսքերի մասին հաշվետվություն (ներառյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները): Փաստաթղթերը ստանալուց հետո, ըստ պայմանագրի 3.7 կետի ԾԿԳ-ն հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրանց համապատասխանությունը պայմանագրի, համապատասխան գործառնական ձեռնարկի և տարեկան նախահաշվի պայմաններին: Թերություններ, սխալներ հայտնաբերելու

դեպքում կազմակերպությունը գրավոր կարգով ԾԻԳ-ի կողմից տեղեկացնում է այդ մասին՝ հնարավորություն ընձեռելով նրան տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր և բացատրություններ, կատարել ուղղումներ:

Պայմանագրի 3.6 կետի համաձայն հաշվետվությունը հինգ օրվա ընթացքում ԾԿԳ-ի կողմից հաստատվելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում:

Համաձայն պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են 3.6 կետով սահմանված նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով:

Չօգտագործված գումարի մասով ամսվա վճարումներից նվազեցումներ չեն կատարվել և ամբողջությամբ բավարարվել են ծախսի փոխհատուցման կազմակերպության գրությամբ նշված գումարը:

Պայմանագրով նախատեսված վճարումներից նվազեցման և հաջորդ ամսվա ծախսերի համար կանխավճարային վճարում կատարելու հայտ ներկայացնելու գործիքների չգործադրումը նվազեցնում է ԾԿԳ-ի հնարավորությունները ազդելու հաջորդ ամսվա իրականացվելիք ծրագրերի պլանավորմանը՝ նախահաշվով նախատեսված ծախսերի շրջանակում:

3. «Ներդրումների աջակցման կենտրոն»

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020թ. մայիսի 15-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի ֆինանսավորումն է:

Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ԾԿԳ-ին է ներկայացնում ծախսերի տարեկան նախահաշիվ:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2021 թվականի համար գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով ներկայացրել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով.

ԲԱՂԱԴՐԻՉ 1 անձնակազմի վարձատրություն

ԲԱՂԱԴՐԻՉ 2 գործուղման ծախսեր

ԲԱՂԱԴՐԻՉ 3 ծառայություններ

Գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով վերոնշյալ բաղադրիչներով սպասվող ծախսերը ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում՝

Աղյուսակ 9.

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ծախսերն ըստ բաղադրիչների

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Ծախս, հազ. դրամ		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	12,320.86	8,331.62	20,652.48
Բաղադրիչ 2	1,900.00	380.00	2,280.00
Բաղադրիչ 3	6,200.00	1,240.00	7,440.00
ԸՆԴԱՄԵՆԸ	20,420.86	9,951.62	30,372.48

11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» միջոցառման 452100 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021թ. երկրորդ եռամսյակի ընթացքում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին կատարվել է հետևյալ վճարումները՝

2021թ. մայիսի 17-ին կատարվել է վճարում հունվարի 1-ից մարտի 31-ը ընկած ժամանակահատվածի ծախսի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից	– 2,606.41 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 1,193.56 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	– 3,799.97 հազ. դրամ

2021թ. մայիսի 17-ին իրականացվել է վճարում ապրիլի 1-ից մինչև 30-ը ընկած ժամանակահատվածի ծախսերի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից	– 792.88 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	–1,018.02 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	–1,810.90 հազ. դրամ

2021թ. հունիսի 15-ին իրականացվել է վճարում մայիսի 1-ից մինչև 31-ը ընկած ժամանակահատվածի ծախսի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից	– 850,02 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 536.04 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	– 1,386.06 հազ. դրամ

Համաձայն դրամաշնորհի հատկացման պայմանագրի 3.5 կետի՝ պայմանագիրը ստորագրելուց հետո կազմակերպության կողմից դրամաշնորհի առաջին տրանշը ստանալու վերաբերյալ հայտի ներկայացմանը հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է առաջին վճարումը: Կազմակերպության առաջին վճարումը կամ կանխավճարը կազմել է՝

ՀԲ վարկային միջոցներից	– 1,700.00 հազ.դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 700.00 հազ.դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	– 2,400.00 հազ.դրամ

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին, պայմանագրով նախատեսված փաստաթղթերը ԾԿԳ չի ներկայացրել և այդ ամիսների համար պայմանագրով նախատեսված կարգով վճարումներ չի իրականացվել:

Ֆոնդը առաջին եռամսյակի համար ԾԿԳ է ներկայացրել մեկ ընդհանուր հաշվետվություն և ԾԿԳ-ի կողմից իրականացվել է վճարում ամբողջ եռամսյակի համար, որը կազմել է ՀԲ վարկային միջոցներից 2,606.41 հազ. դրամ և ՀՀ համաֆինանսավորման միջոցներից 1,193.56 հազ. դրամ, ընդամենը 3,792.97 հազ.դրամ:

Վճարումը իրականացվել է մայիս ամսին: Խախտվել է պայմանագրի 3.4, 3.6, 3.7, 3.8 կետերի պահանջները:

Երկրորդ եռամսյակում նման խախտում չի արձանագրվել:

Առաջին եռամսյակում արձանագրված խախտումները վերացնելու նպատակով սույն թվականի հուլիսի 30-ի համաձայնագրով՝ դրամաշնորհի հատկացման վերաբերյալ, 15.05.2020 թվականի պայմանագրում կատարվել են փոփոխություններ:

«Արտահանման զարգացմանն ուղղված ենթադրամաշնորհներ» ենթաբաղադրիչի շրջանակներում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, ՀՀ վարչապետի աշխատակազմի և շահառու կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում 2021 թվականի առաջին կիսամյակում կատարվել են վճարումներ, որոնք ներկայացված է ներքոնշյալ աղյուսակում.

Աղյուսակ 10.

1136-31004 միջոցառման 2021 թվականի առաջին կիսամյակում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Պայմանագիր		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
EDG-001՝ 01.03.2021թ.	«ԱՐԶՆԻ ՄՍԱՄԹԵՐՔ» ՓԲԸ	16,344.39	3,268.88	19,613.27
EDG-002՝ 01.03.2021թ.	«ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՔԼՈԶԲՍ» ՍՊԸ	23,000.00	4,600.00	27,600.00
EDG-003՝ 01.03.2021թ.	«ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» ՓԲԸ	24,785.93	4,333.00	29,118.93
EDG-004՝ 01.03.2021թ.	«ՀԵԼԼՈՏԵՔՍ» ՍՊԸ	24,267.10	566.78	24,833.88
EDG-005՝ 01.03.2021թ.	«ՖՈՒԴ ՌԵՓԱԲԼԻՔ» ՍՊԸ	45,800.00	-	45,800.00
EDG-006՝ 01.03.2021թ.	«ՆԱՀԱՊԵՏ ԲՐԵՆԴԻ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	8,069.74	-	8,069.74
EDG-007՝ 01.03.2021թ.	«ՍԱԹԵՆԿԱՐ» ՍՊԸ	8,399.83	1,679.97	10,079.80
EDG-008՝ 02.03.2021թ.	«ՊԱՍԱՆ ՏՈՐԳ» ՍՊԸ	5,760.00	-	5,760.00
EDG-009՝ 12.05.2021թ.	«ՎՈԼՆԱԹ ՖԱՐՄՍ» ՍՊԸ	26,000.00	-	26,000.00
ԸՆԴԱՄԵՆԸ		182,426.99	14,448.63	196,875.62

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 11014 «Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով»

Հոդված՝ 4822 «Այլ հարկեր»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11014 «Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով» միջոցառման 4822 «Այլ հարկեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 555,966.40 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 555,966.40 հազ.դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 555,966.33 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 555,966.33 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 100%-ով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում, փոփոխություններ ու վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» N 794-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության «վարչապետի աշխատակազմ» ՊԿՀ-ին է հատկացվել 555.966,33 հազ. դրամ գումար 11014 «Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով» միջոցառման իրականացման համար:

Դեռևս 2020 թվականից Չինաստանից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել որոշակի բժշկական նյութեր և սարքավորումներ, որի համար ՀՀ «Վարչապետի աշխատակազմ» ՊԿՀ-ն ունի 475,342.4 հազ. դրամի հարկային պարտավորություններ: Աշխատակազմը ՀՀ հաշվեքննիչ պալատին է տրամադրել Արևմտյան մաքսատան կողմից ներկայացված հարկային պարտավորությունների տեղեկագրերը, ապրանքների հայտարարագրերը, որոնց վերլուծությունը ներկայացվում է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 11.

1136-11014 «Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով» միջոցառման վերաբերյալ

Ապրանքային հայտարարագիր	Ապրանքի անվանում	Արտահանող	Ապրանքի արժեք հազ. ԱՄՆ դոլար	Մաքսային արժեք	Հարկային պարտավորություն				
					Դրույքաչափ %	Ներմուծման մաքսատուրք	ԱԱՀ	Բնապահպանական հարկ	Պետական տուրք
0014532	Թթվածին արտադրող գեներատոր հավաքածու 400լ	«Արպանիվ» ՍՊԸ	23,562.00 հազ.դրամ	54,467.95	5	2,723.39			6.30
	Թթվածին արտադրող գեներատոր հավաքածու 80լ		13,592.00 հազ.դրամ						
0014533	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր առանց տակդիրի, հավաստագրված չափանմուշային նյութեր, լաբորատոր ազդանյութեր 10000x1դոլար 10000x1.5դոլար	Biotech Biomedicine Shenyang Group Ltd.	250.00	130,825.47	5	6,541.27			4.50
					20		27,473.35		
	Բժշկական կաթոցիկներ ստերիլ ծայրադիրով և փորձանոթներ 431 հատ		3.65	2,047.84	6.5	133.11			
					20		436.19		
	Լվացող և մաքրող միջոցներ, մաքրող միջոց 3 հատ		0.32	173,11	6.5	11.25			
					20		36.87		
					0.5			0.86	
0014530	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր առանց տակդիրի, հավաստագրված չափանմուշային նյութեր, լաբորատոր ազդանյութեր covid 19-ի համար 30000 հատ	China National Pharmaceutical Foreign Trade Corporation	138.00	73,079.56	5	3,653.97			4.50
					20		15,346.70		
0014537	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր առանց տակդիրի, հավաստագրված չափանմուշային նյութեր, լաբորատոր ազդանյութեր covid 19-ի համար 40x5.000 EUR 40x1.500 EUR	D-LAC Driessen Laboratory Consulting	260.00 Հազար EUR	165,815.91	5	8,290.79			9.50
					20		34,821.34		
	Փայտիկներ թեստավորման համար 20000հատ		60.00 Հազար EUR	38,356.84	6.5	2,493.19			
					20		8,170.00		
0014529	Բժշկական պաշտպանիչ հանդերձանք 20000հատ	Hebei Link-All Supply Chain Management CO., LTD	440.00	252,108.82	15	37,816.32			7.80
					20		57,985.02		
	Բժշկական պաշտպանիչ դիմակներ 60000հատ		79.00	43,688.15	0,61	348.39			
					20		8,807.31		

	Բժշկական պաշտպանիչ ակնոցներ 20000 հատ		46.00	29,543.94	5	1,477.19			
					20		6,204.22		
0014534	Օզոնային, թթվածնային և աերոզոլային թերապիայի ապարատութա, արհեստական շնչառության կամ այլ թերապեվտիկ շնչառական սարքավորումներ, Արհեստական շնչառական սարք՝ թթվածնային ST-30 100 հատ	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	1,228.90	651,533.81	20		130,306.76		6.0
	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր առանց տակդիրի, հավաստագրված չափանմուշային նյութեր, լաբորատոր ազդանյութեր covid 19-ի համար 60000 հատ		738.00	387,935.46	5	19,396.77			
					20		81,466.44		
	Բժշկական պաշտպանիչ դիմակներ 130000հատ		192.00	103,793.6	0.61	503.53			
					20		20,859.42		
Ընդամենը						**83,389,2**	**391,913.6**	**0.866**	**38.6**

Համաձայն ՀՀ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության տեղեկատվության (Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2021 թվականի մայիսի 12-ի No 01/7-3/28602-2021 գրություն) «Վարչապետի աշխատակազմի» ՊԿՀ-ն 2021 թվականի մայիսի 12-ի դրությամբ ունի մաքսային պարտավորություններ հետևյալ հարկատեսակներով, որը համաձայն վճարման հանձնարարականների 2021 թվականի մայիսի 21-ին ՀՀ ՊԵԿ «Արևմտյան մաքսատուն» վարչությանն է վճարվել 555,966.33 հազ. դրամ, որը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 12.

1136-11014 «Աջակցության տրամադրում՝ նախորդ տարվա հարկային պարտավորությունների վճարման նպատակով» միջոցառման վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման հանձնարարական	Հարկային պարտավորություն և տույժ		Վճարվել է
	Հարկատեսակ	գումար	
24001	ԱԱՀ	145,265.98	145,265.98
20001	ԱԱՀ	291,501.81	291,501.81
25001	Ներմուծման մաքսատուրք	119,158.87	119,501.81
44001	Բնապահպանական հարկ	1.05	1.05
30001	Պետական տուրք	38.60	38.60
		555,966.33	555,966.33

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 11015 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը»

Հոդված՝ 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11015 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը» միջոցառման 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 390,159.00 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 390,159.00 հազ.դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 390,159.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 339,226.49 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 100%-ով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» N 881-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին է (Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի

մարտի 25-ի N 381-Ն որոշմամբ «տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը» բառերը փոխարինվել է «վարչապետի աշխատակազմին» բառերով և լիազորությունից բխող գործառույթների իրականացմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին) հատկացվել 390,159,0 հազ. դրամ գումար Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացման համար: Այդ նպատակով Վարչապետի աշխատակազմը 2021 թվականի հունիսի 14-ին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հետ կնքում է մինչև 867,020.0 հազ. դրամ դրամաշնորհի No ՀՊՀՖ-21/1 պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում (համաձայն 2021 թվականի հունիսի 14-ի հանձնման-ընդունման N1 արձանագրության, Պայմանագրի 3.1 կետ) կատարել է՝

«Հայաստանի Հանրապետության արդյունաբերական մաշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակներում մրցույթի իրականացման, հայ արտահանողներին դեպի արտերկիր արտահանման գործընթացին նպաստող 1 կազմակերպության հետ բանակցությունների արդյունքում հուշագրի ստորագրման, ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում և հարակից այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակման» աշխատանքները, որի արժեքը նախատեսված է եղել 390,159.00 հազ. դրամ, սակայն փաստացի կատարված աշխատանքների արժեքը համաձայն 2021 թվականի հուլիսի 15-ի դուրս գրված հարկային հաշվի, ինչպես նաև Պայմանագրի 2.4.3 կետով նախատեսված եռամսյակային հաշվետվությունների կազմել է 339,226.49 հազ. դրամ:

Ըստ Պայմանագրի 3.3 կետի՝ կազմակերպությանը վճարումներ կատարվում են հայտերի հիման վրա, անկանխիկ ձևով, ըստ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի (հունիս-390,159.00 հազ. դրամ) կազմակերպությունը 2021 թվականի հունիսի 14-ին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի տնօրենի գրությամբ ներկայացրել է ծախսերի կատարման հայտ, (հայտում ծախսերի կատարման արժեքը կազմում է 390,159.00 հազ. դրամ), որի հիման վրա կազմակերպությանն է վճարվել 390,159.00 հազ. դրամ, որը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 13.

1136-11015 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը» միջոցառման վերաբերյալ

հազ. դրամ

Պայմանագրով սահմանված փաստաթղթեր	Ամիս, ամսաթիվ	Գումար
Նախահաշիվ, հաշվետու ժամանակաշրջանի համար		390,159.00
Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց	հունիս	390,159.00
Ծախսերի կատարման հայտ	14.06.21թ	390,159.00
Վճարման հանձնարարական	16.06.21թ	390,159.00

Կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություն	15.07.21թ	339,226.48
Հարկային հաշիվ	15.07.21թ	339,226.48
Եռամսյակային հաշվետվություն	15.07.21թ	339,226.48
Տարբերություն		50,932.51

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռք բերում»
Հոդված՝ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ»

1136-31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռք բերում» միջոցառման առաջին կիսամյակի ճշտված պլանով 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 1,948,160.20 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 215,000.0 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում), փաստը և փաստացի ծախսը 1,204,323.67 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 61.82%:

Առաջին կիսամյակում ծախսն ուղղվել է Ինժեներական քաղաքի լաբորատորիաների համար մեքենաների և PCB արտադրանքի (բազմաշերտ տպասալ) ձեռքբերմանը, Ջերմային չափումների լաբորատորիայի համար սարքավորումների, ինչպես նաև Զանգվածի ու հարակից չափումների լաբորատորիայի համար սարքավորումների գնմանը:

Մատակարարումներն իրականացվել են թվով 3 պայմանագրերի շրջանակներում, որոնք ստորագրվել են 2020 թվականին: Մատակարարված ապրանքների դիմաց կազմակերպություններին վճարումները ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակում:

Աղյուսակ 14.

1136-31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռք բերում» միջոցառման վճարումների վերաբերյալ

Հ/Հ	Ընթացակարգի ծածկագիր	Գնման առարկայի նկարագրությունը	Գնման ձևը	Մասնակիցները	Հաղթող կազմակերպությունը	Պայմանագրի արժեքը ԱԱՀ-ն ներառյալ		Պայմանագրի կնքման օրը		Փաստացի վճարումները կատարված 2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում /հազ. դրամ		Մեկնաբանություններ
						Սկիզբ	Փոփոխություններ	Սկիզբ	Ավարտ	Վարկային միջոցներ	Համաֆինանսավորում	
1	TPQI-G-2.3.1.2/1	Ինժեներական քաղաքի լաբորատորիաների համար Մեքենաների և PCB (բազմաշերտ տպասալ) արտադրանքի ձեռքբերում	Միջազգային մրցակցային մրցույթ	ՀՁ Կոնցեռն Էներգոմաշ ՓԲԸ (Հայաստան) և Abplanalp Sp. Z.o (Լեհաստան)	ՀՁ Կոնցեռն Էներգոմաշ ՓԲԸ և Abplanalp Sp. Z.o	902,396.40 հազ. դրամ		12.05.20	31.03.21	751,997.0	150,399.4	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
2	TPQIP- G - 3.1.2.1/LOT2	Ջերմային չափումների լաբորատորիայի համար սարքավորումների գնում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Globe Corporation (Նիդերլանդներ) 2. Agrotec SpA (Իտալիա) 3. Lokmis UAB (Լիտվա)	Agrotec SpA (AGT)	307,287.67 Եվրո		14.02.20	28.12.20	38,680.75	0.0	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
3	TPQI-G-3.1.2.1/1	Զանգվածի ու հարակից չափումների լաբորատորիայի համար սարքավորումների գնում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. AGT S.p.A. (Իտալիա) 2. Արփա-Սևան ԲԲԸ-ի (Հայաստան) և Credo USA Inc.-ի (ԱՄՆ) ՀՁ 3. Q&T S.p.A. (Իտալիա) 4. Կոնցեռն Էներգոմաշ ՓԲԸ(Հայաստան) 5. Մեդիսար ՍՊԸ (Հայաստան))	ՀՁ Արփա Սևան ԲԲԸ և Credo USA Inc.	212,588,91 հազ. դրամ		12.11.20	28.04.21	194,873.17	63,038.0	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
		Ընդամենը վճարումներ								985,550.92	213,437.42	

Համաձայն վերոնշյալ աղյուսակի՝ 2021 թվականի առաջին կիսամյակում կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 1,198,988.34 հազ. դրամ (այդ թվում՝ վարկային միջոցներից 985,550.92 հազ. ՀՀ դրամ և ՀՀ պետական համաֆինանսավորման միջոցներից 213,437.42 հազ. ՀՀ դրամ), սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի առաջին կիսամյակի բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 1,204,323.67 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Ծրագիր՝ 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր»

Միջոցառում՝ 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ»

Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 385,936.60 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 328,000.0 հազ.դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 322,893.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 380,160.92 հազ. դրամ: Դրամարկղային ծախից 87,480.50 հազ. դրամը եկամտային հարկն է, 8,067.81 հազ. դրամը պարտադիր սոց. վճարը, 6,325.0 հազ. դրամը դրոշմանիշային վճարը, 3,372.31 հազ. դրամն արհմիության վճարը, 217,647.58 հազ. դրամը տրվել է առձեռն: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 83.66%-ով:,

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Իրականացվել է ընտրված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ծրագիր՝ 1223 «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և

պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»

Հոդված՝ 4861 «Այլ ծախսեր»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 907,329.20 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 779,399.48 հազ. դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 775,901.49 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 775,921.71 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 85.5%-ով:

Միջազգային դատարանում, միջազգային արբիտրաժում և այլ միջազգային ատյաններում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց կատարվել է 6 կազմակերպություններին վճարումներ, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում.

Աղյուսակ 15.

1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակներում վճարումների վերաբերյալ

հ/հ	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվը	Նպատակը	Հազ. ԱՄՆ դոլար	Հազ. դրամ
1	Steptoe & johnson LLP	02.02.21թ	ICSID վարույթում գտնվող Է. Խ.-ն և «Արին կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն ընդեմ ՀՀ-ին ARB/17/36 գործով ՀՀ-ի շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների ու այցելությունների մասով՝ ըստ տեխ բնութագրի:	285.26	148,755.0
2	LALIVE	01.02.21թ	«Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության դեմ հարուցված արբիտրաժային գործի շրջանակում արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, նախնական դատավարական գործընթացներին, ՀՀ հայցի նախապատրաստմանը, Մադրիդի թիվ 1	25.2	13,130.0

			առևտրային Դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ:		
		15.04.21թ	Արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, նախնական դատավարական գործընթացներին, ՀՀ պահանջի նախապատրաստում, Մադրիդի թիվ 1 առևտրային Դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ:	12.175 8.960	11,030.9
3	Linklaters S.L.P.	17.03.21թ	ՀՀՏԿԵՆ և «Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված N T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով Մադրիդում գործող Linklaters S.L.P. Ընկերությանը 2020թ հունիսի 9-ից մինչև հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների համար:	127.8 հազ. եվրո	80,879.3
		22.06.21թ		44.4 հազ. եվրո	27,278.4
4	JAMS Վեճերի այլընտրանքային լուծման կենտրոն	18.01.21թ	JAMS կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ ՀՀ-ի» թիվ 1425032969 հաշտարարության գործով, մատուցված հաշտարարի ծառայությունների դիմաց	0.7	343.2
5	Baker & McKenzie LLP	30.04.21թ	Հայաստանի հարավային հատվածում երկաթուղու կոնցեսիայի վերաբերյալ հաշվետվության առնչությամբ հայցվորի ներկայացրած պնդումների ուսումնասիրություն և պատասխան հավելվածների նախագծում, երկրորդ հաշվետվության մշակումը	239.2	182,711.9
			Գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում և ներկայացում, մյուս կողմի ներկայացրած միջնորդությունների առնչությամբ պատասխանների նախագծում և ներկայացնում, արբիտրաժային լսումներին մասնակցություն և ներկայացուցչություն	110.0	
6	Գաղտնի	11.03.21թ		98.0	51,797.9
		25.06.21թ		240.0	122,503.2
Ընդամենը շահութահարկ			1-ին եռամսյակ		61,167.8
			2-րդ եռամսյակ		76,303.8
Ընդամենը					775,901.4

«STEPTOE & JOHNSON» ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում գտնվող Է. Խ.-ն և «Արին Կապիտալ»

ներդրումային ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ARB/17/36 ներդրումային արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով և համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1621-Ն որոշման Նյու Յորքում և Վաշինգտոնում գործող «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքվել է 280.0 հազ. ԱՄՆ դոլար (չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերը) ընդհանուր գումարով փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի դրույթները տարածվում են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Ծառայությունները մատուցվել են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 2020 թվականի մարտ ամիսը ըստ տեխնիկական բնութագրերի: Հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 8-ի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տրված դրական եզրակացությունը, 2021 թվականի հունվարի 18-ի ստորագրված հանձման ընդունման ակտը, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 2215-Ն որոշումը, ընկերության կողմից ներկայացված 2020 թվականի օգոստոսի 17-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, 2021 թվականի փետրվարի 2-ին ընկերությանն է վճարվել 285,260.85 ԱՄՆ դոլարին համարժեք 148,754.9 հազ. դրամ (280.0 հազ. ԱՄՆ դոլար գումար մատուցված իրավաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 5.26 հազ. ԱՄՆ դոլար գումարը՝ Հայաստան այցի և սուրհանդակային ծառայությունների հետ կապված ծախսերի համար): Պայմանագրի 5.1 կետով նախատեսվում է վճարումներն իրականացնել ըստ վճարման ժամանակացույցի 2020 թվականի ապրիլից-դեկտեմբեր ամիսներին, սակայն Աշխատակազմի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի համաձայն վճարումը կատարվել է 2021 թվականի փետրվարի 2-ին:

«ԼԱԼԻՎ» ընկերություն. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի համաձայն ՄԱՄԱԻՀ (UNCITRAL) արբիտրաժային կանոնների ներքո 2019 թվականի հունվարի 24-ին «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության դեմ հարուցված արբիտրաժային վարույթում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար 2019 թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ արդարադատության նախարարությունը (համաձայն 2020 թվականի ապրիլի 10-ի համաձայնագրի ՀՀ արդարադատության նախարարությունը պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և պարտավորությունները անհատույց փոխանցել է ՀՀ վարչապետի աշխատակազմին) և «ԼԱԼԻՎ» ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB/19/1

պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում «ԼԱԼԻՎ» ընկերության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 31-ն և 2021 թվականի հունվարի 1-ից փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի հունվարի 11-ի թիվ 29, մարտի 10-ի թիվ 30, մարտի 17-ի թիվ 31 արձանագրությունների, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ 2021 թվականի հունվարի 11-ի թիվ 29, մարտի 8-ի թիվ 30 և մարտի 17-ի թիվ 31 ակտերը) հետևյալ ծառայություններ՝ արբիտրաժային տրիբունալի կազմավորման, ՀՀ հայցի նախապատրաստման, նախնական դատավարական գործընթացների նախապատրաստման, Մադրիդի թիվ 1 Առևտրային դատարանում դատավարական գործընթացների պատրաստման: Հաշվի առնելով ընկերության կողմից ներկայացված 2021 թվականի հունվարի 11-ի, փետրվարի 26-ի և մարտի 17-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 11-ի, մարտի 10-ի և մարտի 17-ի ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև ARB/19/1 պայմանագրի 4.5 կետի դրույթները 2021 թվականի փետրվարի 1-ին և ապրիլի 15-ին ընկերությանն է վճարվել համապատասխանաբար 25.21 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 13,129.9 հազ. դրամ (24.85 հազ. ԱՄՆ դոլար գումար մատուցված իրավաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 356.79 ԱՄՆ դոլար գումարը՝ սուրհանդակային ծառայությունների հետ կապված ծախսերի համար) և 21.13 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 11,030.99 հազ. դրամ: Ընդամենը հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայությունների արժեքը կազմել է 46.34 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 24,160.9 հազ. դրամ:

Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը պարզվեց, որ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման թիվ 30 և 31 արձանագրությունները կազմելիս հիմք է ընդունվել «08» ապրիլի 2021 թվականին կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցիչի եզրակացությունը, այսինքն հանձման-ընդունման թիվ 30 և 31 արձանագրությունները կազմվել են մարտ ամսին հիմք ընդունելով ապրիլ ամսին կազմված եզրակացությանը:

«LINKLATERS S.L.P.» ընկերություն. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1154-Ն որոշումը, որով սահմանվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (նախկինում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն) և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ներգրավել Մադրիդում գործող «Linklaters S.L.P.» ընկերությանը, վերջինիս հետ 2020 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ

վարչապետի աշխատակազմը 420.0 հազար եվրո ընդհանուր արժողությամբ փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 11-20 պայմանագիր է կնքել, որը ունի հետադարձ ուժ և գործում է 2020 թվականի հունիսի 9-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրի շրջանակներում «Linklaters S.L.P.» ընկերության կողմից 2020 թվականի հունիսի 9-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի մարտի 9-ի ակտի, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 2021 թվականի մարտի 5-ի դրական եզրակացության) ծառայություններ՝ զուգահեռ վարույթներում (արբիտրաժ/սնանկություն) առաջ շարժվելու վերաբերյալ ռազմավարական խորհրդատվություն, պայմանագրի լուծմանը և երաշխիքների վերադարձին առնչվող բողոքի դեմ պաշտպանություն, Կորսանի կողմից սնանկության առնչությամբ ներկայացված այլ բողոքների դեմ ՏԿԵՆ-ի լիարժեք իրավաբանական ներկայացուցչություն, բանկերի կողմից երաշխիքները վճարելու համար խոչընդոտ հանդիսացած խափանման միջոցի բողոքարկում, բողոքարկումներ սնանկության դատարանի արբիտրաժային համաձայնության իրավաբանական ուժը կասեցնելու որոշման առնչությամբ փաստաթղթերի վերանայում և վերլուծություն: Հաշվի առնելով ընկերության կողմից ներկայացված 2021 թվականի հունվարի 28-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 5-ին ստորագրված հանձման ընդունման ակտը, ինչպես նաև 11-20 պայմանագրի 5.1 կետի դրույթները 2021 թվականի մարտի 17-ին ընկերությանն է վճարվել 127.83 հազ. եվրոյին համարժեք 80,879.28 հազ. դրամ (112.60 հազ. եվրո մատուցված իրավաբանական-փաստաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 15.235 հազար եվրո գումարը՝ թարգմանչական ծախսերի և ճանապարհածախսի համար):

Նույն ժամանակահատվածում (2020 թվականի հունիսի 11-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ն) «Linklaters S.L.P.» ընկերության կողմից մատուցվել են բնույթով տարբեր (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի հունիսի 10-ի ակտի, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 2021 թվականի մայիսի 10-ի դրական եզրակացության) ծառայություններ՝ պայմանագրի լուծմանը և երաշխիքների վերադարձին առնչվող բողոքի դեմ պաշտպանություն, միջնորդության անհրաժեշտության և հիմքերի տեխնիկական վերլուծություն, դատական պրակտիկայի և դոկտրինի վերանայում, ռազմավարության վերաբերյալ զանգ-քնարկումներ պատվիրատուի և «Linklaters S.L.P.» ընկերության իրավաբանների հետ, ներքին զանգ-քնարկումներ մոտեցման վերաբերյալ, փաստաթղթերի վերանայում, միջնորդության կազմում և ներկայացում դատարանին, միջնորդության վերաբերյալ դատական փաստաթղթերի և կողմերի ներկայացրած

գրությունների վերանայում (դատախազի զեկույցը և իրավասությունը մերժելու վերաբերյալ միջնորդության հակընդդեմ գրությունը): Հաշվի առնելով ընկերության կողմից ներկայացված 2021 թվականի ապրիլի 29-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 10-ին ստորագրված հանձման ընդունման ակտը, ինչպես նաև 11-20 պայմանագրի 5-րդ կետի դրույթները 2021 թվականի հունիսի 22-ին ընկերությանն է վճարվել 44.44 հազ. եվրոյին համարժեք 27,278.4 հազ. դրամ, որը ներառում է կիրառելի հարկերը: Ընդամենը հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայությունների արժեքը կազմել է 108,157.7 հազ. դրամ:

«ՋԱՄՍ» վեճերի այլընտրանքային լուծման կենտրոն. «ՋԱՄՍ» վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ Հայաստանի Հանրապետության» թիվ 1425032969 հաշտարարության գործով, կենտրոնի և հաշտարարի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերը հոգալու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1773-Ն որոշմամբ կենտրոնը և ՀՀ վարչապետի աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 6-ին կնքել են պայմանագիր: Հիմք ընդունելով «ՋԱՄՍ» կենտրոնի կողմից ներկայացված 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 5509490 հաշվարկային փաստաթղթերը 2021 թվականի հունվարի 18-ին կենտրոնին է վճարվել 653 ԱՄՆ դոլարին համարժեք 343.2 հազ. դրամ:

«Baker & McKenzie LLP» ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում գտնվող ICSID Case No ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ արդարադատության նախարարությունը (համաձայն 2020 թվականի մայիսի 25-ի No 1 համաձայնագրի ՀՀ արդարադատության նախարարությունը պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և պարտավորությունները անհատույց փոխանցել է ՀՀ վարչապետի աշխատակազմին) և «Baker & McKenzie LLP» ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB/18/28-2 պայմանագիր, որի ընդհանուր գին կազմում է 750.0 հազար ԱՄՆ դոլար:

Պայմանագրի շրջանակներում «Baker & McKenzie LLP» ընկերության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2021 թվականի ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի ապրիլի 10-ի արձանագրության, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 23-ի դրական եզրակացության) ծառայություններ՝ գործի համար էական նշանակություն ունեցող

փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում և ներկայացում, մյուս կողմի ներկայացրած միջնորդությունների առնչությամբ պատասխանների նախագծում և ներկայացնում, արբիտրաժային լսումներին մասնակցություն և ներկայացուցչություն: Ընկերությունը վերը նշված ծառայությունների դիմաց ներկայացրել է 110.0 հազ. ԱՄՆ դոլարի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթեր:

Միևնույն ժամանակ, արբիտրաժային գործի շրջանակներում փորձագիտական եզրակացություն տրամադրելու նպատակով «Baker & McKenzie LLP» ընկերությունը աշխատանքներին է ներգրավել «HWTSK» փորձագիտական ընկերությանը: 2020 թվականի սեպտեմբերից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում արբիտրաժային գործի շրջանակում ներգրավված փորձագետի կողմից մատուցվել է հետևյալ ծառայությունները՝

Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում երկաթուղու կոնցեսիայի վերաբերյալ հաշվետվության առնչությամբ հայցվորի ներկայացրած պնդումների ուսումնասիրություն և պատասխան հավելվածների նախագծում (որի արժեքը կազմում է 21.42 հազ. ԱՄՆ դոլար, որը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերը,

Հայաստանի հարավային հատվածում երկաթուղու կոնցեսիայի վերաբերյալ երկրորդ հաշվետվության մշակում (որի արժեքը կազմում է 217.78 հազ. ԱՄՆ դոլար, որը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերը:

Հաշվի առնելով ընկերության կողմից ներկայացված 2021 թվականի մարտի 25-ի և մարտի 29-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի ապրիլի 23-ին ստորագրված հանձման ընդունման արձանագրությունները, ինչպես նաև ARB/18/28-2 պայմանագրի 4.2 կետի դրույթները 2021 թվականի ապրիլի 30-ին ընկերությանն է վճարվել 349.2 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 182,711.9 հազ. դրամ, որը չի ներառում կիրառելի հարկերը:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Առկա է անհամապատասխանություն 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջի հետ՝ պայմանագրի 5.1 կետով նախատեսվել է վճարումները կատարել ըստ վճարման ժամանակացույցի, սակայն Աշխատակազմի կողմից վճարումը կատարվել է ժամանակացույցով չսահմանված ժամկետում:

6.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1223-11001 միջոցառման շրջանակներում «ԼԱԼԻՎ» ընկերության հետ կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման 10.03.2021 թվականի թիվ 30 և 17.03.2021 թվականի թիվ 31 արձանագրություններում հիմք է ընդունվել 08.04.2021 թվականին կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունը:

Համաձայն ՀՀ վարչապետի 26.05.2021 թվականի թիվ 569-Ա որոշման՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է 692: 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդից հունվար-հունիս ամիսներին վճարումներն իրականացվել են համապատասխանաբար՝ 540, 539, 534, 535, 536, 527 աշխատակցի հաշվով և կիսամյակի ընթացքում 156-ից 165 հաստիք չի համալրվել:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատակազմի կողմից չի ապահովվել 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջի կատարումը՝ կապված վճարումների ժամանակացույցի հետ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկել Աշխատակազմում թափուր հաստիքների առկայության նպատակահարմարության հարցը:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (կցվում է), առարկություններ չեն ներկայացվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյան

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 221-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի» շրջանակներում հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) մեջ նշվածների վերաբերյալ հայտնում եմ՝

«1223. Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի «11001. Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»

1. **Բյուջեի կատարողական**

Արձանագրությամբ նշվում է, որ ՀՀ 2021թ. պետական բյուջեով 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացման ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 85.5%-ով:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ բյուջեի հատկացման նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը (այսուհետ՝ «Գրասենյակ») նախատեսում է ապագա ծախսերի մոտավոր և առավելագույն սահմանաչափ բյուջեի հատկացման պահանջի ներկայացման օրվա դրությամբ ընթացիկ արբիտրաժային, դատական և այլ վարույթների շրջանակներում, իսկ տարվա ընթացքում փորձում է հատկացված/բաշխված միջոցներն օգտագործել հնարավորինս խնայողաբար: Արդյունքում, նշված հոդվածով բյուջեի կատարողականը գնահատվել է ընդհանուր 85.5%:

2. **"Steptoe & Johnson" LLP-ին կատարված վճարում**

Արձանագրությամբ մատնանշվում է, որ "Steptoe & Johnson" LLP-ին (սույն մասում այսուհետ՝ «Ընկերություն») «Պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման» 2020թ. հունվարի 8-ին կնքված N ARB/17/36 պայմանագրի (սույն մասում այսուհետ՝ «Պայմանագիր») հիման վրա վճարումը կատարվել է 2021թ. փետրվարի 2-ին, մինչդեռ Պայմանագրի 5.1 կետով նախատեսվել է վճարումներն իրականացնել ըստ վճարման ժամանակացույցի՝ 2020թ. ապրիլից-դեկտեմբեր ամիսներին:

Պայմանագրի կնքման գործընթացն Ընկերության հետ կազմակերպվել է պատշաճ ձևով: Ընկերությունն ԱՄՆ-ից պահանջված կարգով ուղարկել է

Պայմանագրի բնօրինակները, որոնք ՀՀ կողմից ընդունվել և կնքվել են 2021թ. հունվարի 8-ին: Գրասենյակը միջոցներ է ձեռնարկել մատուցված ծառայությունների դիմաց Ընկերության վճարումն ապահովել 2020թ. ընթացքում՝ համաձայն վճարման ժամանակացույցի, սակայն **վճարումն իրականացնել հնարավոր չի եղել պետական բյուջեի միջոցների սղության պատճառով:** Ընկերության հետ նամակագրության միջոցով համաձայնեցվել է մատուցված ծառայությունների հանձնում-ընդունումը կատարել և համապատասխան վճարումն ապահովել 2021 թվականին, ինչի կապակցությամբ Ընկերության կողմից առարկություններ և դժգոհություններ չեն եղել: Ավելին, կողմերը քայլեր են ձեռնարկել Պայմանագրի վճարման ժամանակացույցը փոփոխելու ուղղությամբ, և փոփոխության բնօրինակն ԱՄՆ-ից սպասվում է առաջիկայում:

3. "LALIVE" ընկերությանը կատարված վճարում

LALIVE ընկերությանը կատարված վճարման վերաբերյալ ներկայացված փաստական տվյալներում հայտնաբերվել է ոչ ճշգրիտ տեղեկատվություն. LALIVE ընկերությունը 2021թ. առաջին վեց ամիսների ընթացքում ծառայություններ է մատուցել ոչ թե հունվարի 1-ից փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում, այլև հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Ըստ այդմ, Արձանագրությունում չեն արտացոլվել 2021թ. փետրվարի 28-ից հունիսի 30-ը ներառյալ կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունները, հանձնման-ընդունման արձանագրությունները, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը ու հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է հանձնման-ընդունման թիվ 30 և 31 արձանագրությունների ամսաթվի վերաբերյալ նկատառմանը, ապա հարկ է նշել, որ դրանք կազմվել են մարտ ամսվա ընթացքում, սակայն դրական եզրակացությունը տրվել է, ծառայություններն ընդունվել և արձանագրությունները ստորագրվել են ապրիլ ամսվա ընթացքում: Ամսաթվերի առնչությամբ նման տեխնիկական անհամապատասխանությունից հետագայում խուսափելու նպատակով հաջորդիվ արձանագրություններում փաստաթղթի կազմման ամսաթիվը փոխարինվել է յուրաքանչյուր կողմի՝ արձանագրության ստորագրման ամսաթվով:

Վարչապետի աշխատակազմի ֆինանսական
և հաշվապահական հաշվառման
վարչության պետ — Ս. Սահակյան